

ՄԱՆԿԱԴԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ «ՀՈՐԻԶՈՆ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ


Փետրուար 2024

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Իր հայրենիքը ազատ եւ անկախ պահելու համար, հայ ժողովուրդը պատմության ընթացքին միշտ պայքարած է դէմ դնելով թշնամիներուն: Քաջ Վարդանի ժամանակէն մինչեւ այսօր նոյն պայքարն է, որ կը մղուի: Այդ պայքարը հայ ազգի գոյատեւումը ապահովող պայքար է, պահպանելու համար ազգային արժէքները: Վարդանի, Ղեւոնդ Երեցի, հայրենասէր նախարարներու եւ հոգեւորականներու անձնագրիւթեան ու ազգասիրութեան օրինակը շարունակուեցաւ Փետրուարեան ապստամբութեամբ, Սարգսրապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի ճակատամարտերով եւ Արցախի ազատագրման պայքարով:

Այսօր ալ Աւարայրի ճակատամարտ է. վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց պայքար է: Այսօր ալ կազմակերպուած մեծ դաւ մը կայ մեր ժողովուրդի գլխին: Եկէք բոլորս միասին, քաջաբար տանինք մեր պայքարը պահպանելու համար մեր գոյատեւումը տէր կանգնելով մեր հողին, մեր եկեղեցիին, մեր մշակոյթին, մեր լեզուին եւ այն բոլոր արժէքներուն, որ հայը կը պահէ հայ:

ՎԱԶԳԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ



Վազգէն Սարգսեան հայազգի ռազմական եւ քաղաքական ակնառու գործիչ է: Անոր աշխոյժ գործունէութիւնը սկսած է 1988 թուականին Ղարաբաղեան շարժման ժամանակ, նպատակ ունենալով Արցախի միացումը Հայաստանին:

Վազգէն Սարգսեան եղած է Հայաստանի Հանրապետութեան

առաջին պաշտպանութեան նախարարը 1991-1992 թուականներուն ապա՝ 1995-1999 թուականներուն: Ան եղած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ 1999 թուականի Յունիս 11-էն մինչեւ իր սպանութիւնը, որ պատահեցաւ նոյն թուականի 27 Հոկտեմբերին: Ան մեծ դեր ունեցած է Հայոց ազգային բանակի ստեղծման գործին մէջ. մեծ է նաեւ դերը Հայոց պետականութեան կերտման գործին մէջ: Ժողովուրդը իրեն տուած է «Սպարապետ» պատուանունը:

Այսօր, Հայաստանի Արարատ գիւղին մէջ կը գտնուի Վազգէն Սարգսեանի տուն-թանգարանը: Եւ իր մարմինը կը ննջէ Եռաբլուրի Զինուորական պանթէոնին մէջ:

Վազգէն Սարգսեան պարգեւատրուած է «Ոսկէ Արծի» շքանշանով եւ արժանացած է Հայաստանի եւ Արցախի բարձրագոյն կոչումներուն՝ Հայաստանի ազգային հերոս եւ Արցախի հերոս:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ



Մեր ազգային հերոսներէն Գարեգին Նժդեհը ըսած է. «Երբ ազգը դառնայ բանակ, անոր հնարաւոր չէ յաղթել»:

Հայկական Բանակը հիմնուեցաւ 28 Յունուար 1992-ին, Արցախեան շարժումի ընթացքին, Արցախեան պատերազմի կամաւորական գունդերէն: Ան յաճախ կը

ճանչցուի ՀՀ ԶՈՒ Կրճատումով, որ կը նշանակէ Հայաստանի Հանրապետութեան Զինուած Ուժեր:

Հայաստանի երկրորդ անկախութենէն ետք, Վազգէն Սարգսեան նշանակուեցաւ Հայաստանի Հանրապետութեան առաջին պաշտպանութեան նախարար: Վազգէն Սարգսեանի եւ իր ընկերներուն ջանքերով, Հայկական կամաւորական բանակը դարձաւ կազմակերպուած բանակ:

1993-ին Վազգէն Սարգսեանը հիմնեց եւ գլխաւորեց Երկրապահ կամաւորական շարժումը, որ մաս կը կազմէր Հայաստանի աշխարհագորային ուժերուն:

Միշտ պէտք է յիշել, որ առանց զօրաւոր բանակի ո՛չ ազատութիւն կայ եւ ո՛չ ալ անկախութիւն: Ունինք քաջ, անձնուէր ու հայրենասէր տղաք ու աղջիկներ, պիտի ունենանք զօրաւոր բանակ եւ պիտի վերատիրանանք Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանին:

ԵՐԱԶ ԻՄ ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Խօսք եւ երաժշտութիւն՝ Ռուպերթ Ամիրխանեանի



Երազ իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, յոյսդ մեծ,
Քարքարոտ երկիր:
Ես մի բունն եմ քո հողի,
Ես մի ծիլն եմ քո արտի,
Ես մի թերթն եմ քո ծաղկի,
Հայրենի երկիր, Հայաստան:
Երազ իմ երկիր հայրենի,
Հոգսերդ շատ, յոյսդ մեծ,
Արծուարոյն երկիր:
Իմ պապերն են քեզ շահել,
Իմ եղբայրքն են քեզ պահել,
Քոնն է որդիք իմ ջահել,
Հայրենի երկիր, Հայաստան:

ՎԱՐԴԱՆԱՆՔ

301 թուականին, Հայաստանը եղաւ աշխարհի առաջին երկիրը, որ ընդունեց քրիստոնէութիւնը իբրեւ պետական կրօն:

Այդ թուականէն մօտաւորապէս դար մը ետք, պարսիկներու Յազկերտ Բ. Թագաւորը ուզեց ձուլել հայերը պարսիկ ժողովուրդին մէջ: Ան հրաման արձակեց, որ Հայաստանը հրաժարի քրիստոնէութենէն եւ ընդունի պարսիկներու զրադաշտական կրօնը:

Հայ նախարարներ եւ հոգեւորական հայրեր մերժեցին կատարել հրամանը եւ ապստամբեցան: 451 թուականին տեղի ունեցաւ Աւարայրի ճակատամարտը Վարդան Մամիկոնեան զօրավարի գլխաւորութեամբ եւ Ղեւոնդ Երէցի օրհնութեամբ:

Ճակատամարտը տեղի ունեցաւ Աւարայրի դաշտին վրայ, Տղմուտ գետի ափին: Հայերը ունէին 66,000 զինուոր, որուն մեծ բաժինը բաղկացած էր անվարժ եւ լաւ չզինուած կռուողներէ. բայց բոլորին նպատակը մէկ



էր՝ պաշտպանել իրենց հաւատքը եւ իրենց հայրենիքի ազատութիւնը: Ճակատամարտի ասարտին, հայերէն զոհուեցան 1036 զինուոր: Այս նահատակները կոչուեցան «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահատակներ: Պարսիկները ունէին 300 000 զինուոր, որոնցմէ զոհուեցան 3544 հոգի:

Հայերը ճակատամարտը կորսնցուցին, բայց վարչորին իրենց զէնքերը. տարբեր-տարբեր ճակատներու վրայ յաճախ կռիւներ մղեցին: Ժամանակի ընթացքին պարսիկները անդրադարձան, թէ հայերուն բռնի ուժով պարտադրելու իրենց կամքը պիտի չյաջողի:

Աւելի ուշ, 484 թուականին Հայաստանի Նուարսակ գիւղին մէջ հայերուն եւ պարսիկներուն միջեւ կնքուեցաւ Նուարսակի պայմանագիրը: Այս պայմանագրով, հայ ժողովուրդը ունեցաւ միայն հայ պետական բարձրաստիճան պաշտօնեաներ եւ պահեց քրիստոնէութիւնը, որպէս պետական կրօն:



ՎԱՅՈՑ ՁՈՐ



Վայոց Ձորը Հայաստանի մարզերէն մէկն է, որ կը գտնուի Հայաստանի Հանրապետութեան հարաւ-արեւմտեան կողմը: Իր սահմանին կան Գեղարքունիքի մարզը, Արցախի Շահումեան շրջանը, Սիւնիքի մարզը, Նախիջեւանը եւ Արարատի մարզը:

Վայոց Ձորի ամէնէն մեծ քաղաքն է Եղեգնաձորը: Վայոց Ձորի մէջ կ'իյնան նաեւ Վայքն ու Զերմուկը: Իր մաքուր օդով եւ բուժիչ ջուրով, Զերմուկը զբօսաշրջութեան կարեւոր կեդրոններէն մէկն է, ծանօթ որպէս առողջարանային քաղաք:

Վայոց Ձորը հարուստ է խաղողի որթատունկերով եւ Հայաստանի խաղողագործական չորս շրջաններէն մէկն է: Նշանաւոր է գինեգործութեամբ եւ «Արենի» տեսակի խաղողով: Հոն կը պատրաստեն «Արենի» հանրաճանօթ գինին:

Վայոց Ձորը նաեւ յայտնի է հարուստ մշակութային ժառանգութեամբ եւ պատմական անցեալով: Հոն է որ, թոչուններու քարայրին մէջ յայտնաբերուած է յայտնի ամէնէն հին կօշիկի նմոյշը՝ կաշիէ տրեխը: Վայոց Ձորի մասին երկար անդրադարձած է պատմահայր Մովսէս Խորենացին:



14 ՓԵՏՐՈՒԱՐ – ՏԵԱՌՆԴԱՌԱԶ

14 Փետրուարը բոլորին ծանօթ է, որպէս Saint Valentine-ի տօնը: Բայց լաւ կ'ըլլայ նաեւ յիշել, թէ նոյն այդ օրը հայ եկեղեցին կը տօնէ Տեառնդատաջը:



Տեառնդատաջը 40 օրուան Յիսուս մանուկին տաճար տարուելու եւ Աստուծոյ նուիրուելու օրն է: Մէկ գիշեր առաջ, 13 Փետրուարին եկեղեցոյ մէջ ժամերգութիւն տեղի կ'ունենայ, որմէ ետք եկեղեցոյ բակին մէջ կրակ կը վառեն իբրեւ Աստուծոյ լոյսին խորհրդանիշ: Հաւատացեալներ արարողութենէն ետք, իրենց մոմերը վառելով տուն կը վերադառնան, այդ լոյսով լուսաւորելու տունը եւ ընտանիքի անդամներուն հոգիներն ու մտքերը:

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ

1921-ին երբ Հայաստան կորսնցուց իր անկախութիւնը եւ խորհրդայնացաւ, հայ մտաւորականներն ու քաղաքական դէմքերը հալածուեցան, բանտարկուեցան եւ աքսորուեցան: 1921 Փետրուարի կէսերուն, հայ ժողովուրդը չդիմանալով եղած անարդարութեան ապստամբեցաւ:



Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ բանտերէն եւ հալածանքներէն ազատեցան Յովհաննէս Քաջազունին, Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալեանը եւ այլ պետական գործիչներ, մտաւորականներ եւ սպաներ: Այդ օրերուն Գարեգին Նժդեհի պայքարին եւ այս ապստամբութեան շնորհիւ Զանգեզուրը չտրուեցաւ Ատրպէյճանին:

ՍԱՄԻԹ



Սամիթը յատուկ համ եւ բոյր ունեցող կանաչեղէն մըն է. կ'աճի ցանքերու մէջ կամ ճամբաներու եզերքին: Անոր տերեւները փետուրի նման են եւ ասեղնաձեւ: Սամիթի սերմերը հարուստ են եթերային իւղով, որ կ'օգտագործուի անուշեղէններու, պահածոներու եւ բուրուամնաւէտ օճառներու արտադրութեան մէջ:

Սամիթի ջուրը կ'օգտագործուի բժշկութեան մէջ, յատկապէս երեխաներուն մօտ ստամոքսային ցաւերը մեղմացնելու: Սամիթի տերեւները հարուստ են A եւ C կենսասնիթերով: Սամիթը առաւելաբար կ'օգտագործուի թարմ վիճակի մէջ, որովհետեւ երբ չորցնենք կը կորսնցնէ իր բոյրը:

ՍԿԻՒԻ



Սկիւռը կրծողներու ընտանիքին պատկանող, երկար եւ փափուկ պոչով փոքր կենդանի մըն է: Ան իր ետեւի թաթերուն վրայ ոտքի կենալով, առջեւի թաթերը կ'օգտագործէ իր կերակուրը բռնելու:

Սկիւռներուն կարելի է հանդիպիլ ամառ թէ ձմեռ: Անոնք կը սնանին բոյսեր, հակիթներ, միջատներ, փոքր թռչուններ եւ գորտեր ուտելով:

Կրծողներու ընտանիքին պատկանող միւս կենդանիներուն նման, սկիւռները ունին սուր ակոյաներ: Այդ իսկ պատճառով, բնաւ յանձնարարելի չէ ձեռքով սկիւռ մը կերակրել: Պատճառը այն է, որ ան կրնայ վարակուած ըլլալ ժանտախտով կամ այլ հիւանդութիւններով: Սկիւռը վիրաւորելով զինք կերակրողին կրնայ իր հիւանդութիւնը փոխանցել անոր:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Պատմական Հայաստանը, հին անունով Մեծ Հայք, կը տարածուի Սուրիոյ, Միջագետքի, Փիւնիկի, Պաղեստինի եւ Եգիպտոսի հիւսիսային կողմը, լեռնային գօտիի վրայ: Անոր սահմաններն են արեւելքէն արեւմուտք՝ Կասպից ծովէն Եփրատ գետ, իսկ հիւսիսէն հարաւ՝ Կուր գետէն մինչեւ Կորդուաց եւ Մասիս լեռները:

Այս սահմաններուն մէջ, Հայաստանը կը գրաւէր 300,000 քառ. քմ. տարածութիւն:

Հայոց աշխարհը հարուստ է լեռնաշղթաներով եւ բարձր գագաթներով. ասոնց մէջ ամէնէն նշանաւորն է Հայկական Պարը, որ սկիզբ կ'առնէ Արարատի մօտերէն եւ կը հասնի մինչեւ Եփրատ գետ: Հարաւի կողմէն կան Ծաղկանց լեռները եւ Բիւրակնեան լեռները: Հայկական լեռնաշխարհի բարձրագոյն գագաթն է Արարատը, իր երկու գագաթներով՝ մեծ Մասիս եւ փոքր Մասիս: Արարատեան դաշտի այլ նշանաւոր լեռ մըն է Արագածը, որ չորս գագաթներ ունենալուն պատճառով կը կոչուի նաեւ քառագագաթ: Հայաստանի երկրորդ բարձրագոյն գագաթն է Սիփանը, որ կը գտնուի Վանայ Լիճին հիւսիս-արեւմուտքը:

Հայոց աշխարհը հարուստ է նաեւ ջուրերով: Հազարաւոր մեծ ու փոքր գետեր կը բխին անոր լեռներէն: Արաքս կամ Երասխ գետը ծանօթ է նաեւ Մայր Արաքս անունով, որովհետեւ ան իր ամբողջ ընթացքով կը հոսի Հայաստանի մէջ: Կան նաեւ Եփրատ ու Տիգրիս գետերը:

Հայաստանի գետակներէն են Ախուրեան, Սեւ Ջուր, Մեծամօր, Հրազդան, Զանգու եւ Ազատ:

Հայաստանի երեք մեծ լիճերն են Սեւանայ լիճը, Վանայ լիճը եւ Ուրմիոյ լիճը:



Հայաստանի ամէնէն ընդարձակ եւ բերրի դաշտն է Արարատեան դաշտը: Կան նաեւ Կարսի եւ Շիրակի դաշտերը, ինչպէս նաեւ Մշոյ, Ալաշկերտի, խարբերդի դաշտերը եւ ուրիշներ: Դաշտերուն մէջ կարելի է ցանել հացահատիկ, բրինձ, բամպակ, խաղող եւ այլն:

ՆՈՒՌԸ ՈՐՊԷՍ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ





Հայկական ամենօրյա մեջ նուրը կեանքի, ծաղկման, առատության եւ ամուսնության խորհուրդը ունի:

Հին ժամանակ հարսը տան մուտքի դրան կը նետէր նուրը, իմանալու համար թէ քանի զաակ պիտի ունենայ: Որքան շատ հատիկներ թափուէին, ան այնքան շատ զաակ կ'ունենար:

Նուրը գլխին «թագ» ունենալուն պատճառով համարուած է նաեւ իշխանության նշան:

Նոան խորհրդաբանութիւնը օգտագործուած է հայկական ճարտարապետության, գորգագործության, կապագործության, քանդակագործության, նկարչության, մանրանկարչության եւ այլ արուեստներու մէջ:

Իբրեւ ազգային խորհրդանիշ՝ ան կ'օգտագործուի նաեւ համակարգչային արհեստագիտության մարզէն ներս, գովազդներու եւ տարբեր տեսահոլովակներու մէջ:



Նուրը որպէս խորհրդանիշ օգտագործուած է Սերգէյ Փարաջանովի «Նոան գոյնը» ֆիլմին մէջ, ինչպէս նաեւ Ատոմ Էկոյեանի «Արարատ» ֆիլմին մէջ:

ԾԻՐԱՆԸ ՈՐՊԷՍ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Ծիրանը Հայաստանի քաղցր եւ հիւթալի պտուղներէն մէկն է: Հայկական ծիրանը, կը տարբերի այլ երկիրներու ծիրաններէն իր համով եւ իր իւրայատուկ գոյնով: Այս միրգին գոյնը ո՛չ դեղին է, ո՛չ նարնջագոյն. այլ ունի ծիրանագոյն երանգ:

Ծիրանը բախտի եւ բարգաւաճման խորհրդանիշ է: Հայ թագաւորներ պատերազմի կ'երթային ծիրանագոյն զարդեր հագած:



ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՏՈՒԿԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՄԻԱՅՆ ԾԻՐԱՆԻ ԾԱՌԻ ՓԱՅՏԷՆ

Հայկական ամենայայտնի երաժշտական գործիքը՝ տուտուկը կը կոչուի նաեւ ծիրանափող՝ այսինքն ծիրանէն պատրաստուած փող:



Ո՞Վ Կ'ՈՒՂԷ ԲԱԶՄԱԳԷՏ ԸԼԼԱԼ

1. Ո՞ր թուականին տեղի ունեցաւ Աւարայրի ճակատամարտը:

- Ա. 301 թուականին:
- Բ. 1036 թուականին:
- Գ. 451 թուականին:

2. Ի՞նչ էր Բոլոր հայ զինուորներուն նպատակը:

- Ա. Պաշտպանել իրենց հաւատքը եւ իրենց հայրենիքի ազատութիւնը
- Բ. Պաշտպանել իրենց ընտանիքը:
- Գ. Պաշտպանել իրենց թագաւորը:

3. Ի՞նչ ըսած է Գարեգին Նժդեհ:

- Ա. «Երբ ազգը դառնայ բանակ, անոր հնարաւոր չէ յաղթել»:
- Բ. «Երբ ազգը բաժան-բաժան ըլլայ, անոր հնարաւոր չէ յաղթել»:
- Գ. «Երբ ազգը քով-քովի գայ, կը պարտուի»:

4. Ժողովուրդը ի՞նչ պատուանուն տուած է Վազգէն Սարգսեանին:

- Ա. «Գնդապետ»:
- Բ. «Հրամանատար»:
- Գ. «Սպարապետ» :

5. Ո՞ր կը գտնուի Վայոց Ձորը:

- Ա. Վայոց Ձորը կը գտնուի Հայաստանի հիւսիս-արեւմտեան կողմը:
- Բ. Վայոց Ձորը կը գտնուի Հայաստանի հարաւ-արեւմտեան կողմը:
- Գ. Վայոց Ձորը կը գտնուի Հայաստանի հարաւ-արեւելեան կողմը:

6. Ի՞նչնով նշանաւոր է Վայոց Ձորը:

- Ա. Վայոց Ձորը նշանաւոր է գորգագործութեամբ:
- Բ. Վայոց Ձորը նշանաւոր է ելեկտրական կայաններով:
- Գ. Վայոց Ձորը նշանաւոր է գինեգործութեամբ եւ «Արենի» տեսակի խաղողով:

7. 13 Փետրուարին հայ եկեղեցին ո՞ր տօնը կը տօնէ:

- Ա. Սուրբ Զատիկ:
- Բ. Տեառնդառաջ:
- Գ. Նաակատիք:

8. Հայաստանի ամէնէն ընդարձակ եւ բերրի դաշտն է ...

- Ա. Շիրակի դաշտը:
- Բ. Արարատեան դաշտը:
- Գ. Մշոյ դաշտը:

9. Նուրը գլխին «թագ» ունենալուն պատճառով համարուած է ...

- Ա. Իշխանության նշան:
- Բ. Կեանքի նշան:
- Գ. Սիրոյ նշան :

10. Ո՞ր երաժշտական գործիքն է ծիրանափողը:

- Ա. տուտուկը:
- Բ. տհոլը:
- Գ. սրինգը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757
 Email: sylvia@horizonweekly.ca
 Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի
 Թիւր պատրաստեց Թալիա Ճապրայեան
 Ձեւադրացք՝ Լորի Խաչերեանի